

ՀԱՅ ԳՐԱՂՆԵՐԻ ՆԱՍՏԱԿՆԵՐԸ ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻՆ

Դավիթ Անանունը (Դավիթ Տեր-Դանիելյան, 1879 – 1943, ծննդով՝ Արցախի Մեծ Շեն գյուղից) սլաոմաբան, գրականագետ, հրապարակախոս, քաղաքական և պետական գործիչ, քսաներորդ դարի առաջին քառորդի Հայ մտքի երևելի դեմքերից էր և ստախյան բուսուծյունների առաջին զոհերից:

Դավիթ Անանունը ժամանակին սերտ կապեր է ունեցել ինչպես Հայ քաղաքական և պետական գործիչների, այնպես էլ Հայ գրողների հետ: Նա հաճախ նպաստել է Հայ գրողների ստեղծագործությունների տպագրությանը, նրանց ստեղծագործությունների վերաբերյալ հանդես եկել գրախոսություններով և, անհրաժեշտության դեպքում, իր սուղ միջոցներից օգնություն ցույց տվել նրանց:

Անանունը հարյուրավոր նամակներ է ստացել Հայ գրողներից և գրականագետներից, որոնց մեծ մասը անհայտ են ոչ միայն ընթերցողներին, այլև մասնագետներին: Նա նամակագրական կապեր է ունեցել Վահան Տերյանի, Հովհաննես Թումանյանի, Շիրվանզադեի, Ալեքսանդր Մատուրյանի, Շուշանիկ Կուրդիյանի, Ներսիս Չարենցի, Վրթանես Փափագյանի, Արամայիսի (Միսաք Տեր-Դանիելյան), Դերենիկ Դեմիրճյանի, Ստեփան Զորյանի, Ասրպետի (Սարգիս Մուրադյան), Խորեն Լորենցի, Լևոն Աթաբեկյանի և ուրիշների հետ: Դրա լավագույն ապացույցն են «Գործ»¹ հանդեսը և «Հայաստանի կոոպերացիա» պարբերականը: Թվում է, թե Երևանի նահանգի կոոպերատիվների միությունը պարբերականը ոչ մի կապ չունի գրականության հետ: Հարցին այդպես էր մոտենում պարբերականի նախկին խմբագիր Սիմոն Վրացյանը: Անանունը, ստանձնելով գլխավոր խմբագրի պաշտոնը, ծրագրային բնույթի առաջաբանում գրում է, որ պարբերականը «իր էջերը լայն պիտի բանա այն ուժերի առաջ, որ գալու են՝ 1. օբյեկտիվ լուսաբանությունը պարզելու հանրապետության խնդիրները, 2. զարկ տալու մեր գեղարվեստին և գրականությանը և 3. ուսումնասիրելու այն երևույթները, որ անմիջապես առնչություն ունեն կոոպերատիվ կյանքի հետ»²: Եվ հավատարիմ մնալով իր իսկ հայտարարած ծրագրային այդ սկզբունքին՝ Անանունը պարբերականի 1920թ. առաջին համարից բացում է գրական բաժին, որտեղ տպագրվում են Հ.Թումանյանի, Վ.Տերյանի, Ե.Չարենցի, Դ.Դեմիրճյանի, Ստ.Զորյանի, Վ.Փափագյանի, Վ.Թովթովենցի, Լեոյի, Վեսպերի, Վ. Աղասյանի, Խ.Լորենցի, ինչպես և շատ երիտասարդ գրողների ստեղծագործությունները: Այդ դեպքերին ու ծանր ժամանակաշրջանում Անանունը Հայ գրողների համար ոչ միայն մեկենաս էր, այլև նրանց օգնում էր ճիշտ հասկանալ գրականության դերը հասարակության դաստիարակության գործում: «Ստի հարատևությունը» վերտառությամբ հոգևածում, վերլուծելով գեղարվեստի դերը, «որը տարբեր պայմաններում տարբեր կերպ է հանդես գալիս՝ կատարելու իր ազնվացնող առաքելությունը», Անանունը Հայ գրողներից պահանջում է «խոստովանել, որ մեր գրականությունը խուսափում է տեսնել կյանքը, ինչպես որ այն կա...» և «ջերմոցային գրականությունից... անցնել միս ու ոսկոր պարունակող, իրականության շնչով թաթախված գրականության»: Անանունը Հայ գրողներին կոչ էր նում՝ «Դարձ դեպի ճշմարտություն»³:

Հրապարակվող նամակներում հիմնականում շոշափվում են գրական, քաղաքական, տնտեսական և կենցաղային հարցեր:

Մի շարք նամակներում կատարել ենք անհրաժեշտ կրճատումներ և լեզվական շտկումներ: Բնագրերում պահպանվել են հեղինակների ընդգծումները:

Հ.Բ.ԱՐԱՆՆԱՍՅԱՆ

ՇԻՐՎԱՆՁԱԴԵԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

№ 1

4 օգոստ. 16թ., Թիֆլիս

Մեծարգո պարոն Դ.Անանուն

Համաձայն Ձեր առաջարկի՝ Հայտնում եմ Ձեզ «Գործի» խմբագրությունը Հաղորդելու Համար այն պայմանները, որոնք կարող են միայն ինձ միջոց տալ այդ ամսագրին աշխատակցելու...

Դրաման լիովին սչատրաստ ու արտագրված է, կարող եմ ուղարկել երբ պահանջվի: Վեպը ծրագրված է և կլինի պատրաստ մինչև դեկտեմբեր:

Դրաման, որ 4 արարով և 6 պատկերով է, թուրքահայերի այժմյան կյանքից է՝ կամավորական շարժման հետ կապված:

Վեպը ժամանակակից կյանքից է և պատերազմի հետ կապ չունի:

Բայց իմ ամենագլխավոր պայմանն է. անաղարտ տպագրություն իմ երկերի: Ոչ կրճատում և ոչ նույնիսկ մի որևէ բառի կամ կետի փոփոխություն...

«Գործ»-ին աշխատակցելը լայն կանեմ միայն այն դեպքում, երբ կունենամ ապացույց, որ ամսագիրը այդ իմ աշխատակցության կարիքը զգում է: Կանխավ մերժում եմ ամեն մի զիջում, որի կարիքը ես չեմ զգում:

Հարգանքներով Շիրվանզադե

Հայաստանի Հանրապետության Հասարակական, քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ), ֆ. 4041, ց. 1, գ. 100, ք. 5:

6 սեպտ. 1916թ., Թիֆլիս

№ 2

Մեծարգո պ. Դ.Անանուն

Ստացա Ձեր պատվիրյալ նամակը:

Նախ կարող եմ ապահովել Ձեզ, որ Ձեր խնդիրը պ. Տեր-Աստվածատրյանի մասին կկատարվի: Արդեն խոստումն ունեմ ստացած:

Գալով իմ գործին, բարի եղեք Հայտնելու «Գործի» հարգելի խմբագրությանը, որ ես բացեիքաց հրաժարվում եմ նրա որոշած պայմաններով աշխատակցելու: Սովորաբար իմ աշխատակցելու պայմաններն ես ինքս եմ որոշում և աշխատակցում եմ միայն այն դեպքում, երբ որոշումն ընդունվում է լիովին:

Ինչ վերաբերում է Ձեր՝ «Խմբագրությունը իրեն է վերապահում գրական գործերի ընտրության իրավունքը» դարձվածին, պատիվ ունեմ «Գործի» խմբագրությանը Հայտնելու, թե այդ տեսակ դարձվածներ ինձ համար անհասկանալի են: Այդ տեսակ իրավունք ես ոչ ոքի չեմ տվել երբեք և չեմ կարող տալ...

Ցավով է, որ «Գործն» ևս իր նախորդների պես այդպիսի նյութական ողորմելի պայմաններում է լույս տեսնում...

Հարգանքով Շիրվանզադե

Հայաստանի Հանրապետության Գրականության և արվեստի բանգարան, Դավիթ Անանունի ֆ. (այսուհետև՝ ՀՀ ԳԱԹ ԴԱ), № 86:

ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱՉՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ

№ 3

1919թ. օգոստ. 6, Թիֆլիս

Սիրելի պ. Անանուն

Ի սեր Աստծո. մտե՛ք այդ մեր ֆինանսների նախարարի մոտ և ջանա-
ցեք, որ իսկույն, շատ շուտով այն քննիչ Հանձնաժողովի 210 Հազար Հեկը
ուղարկեն, որպեսզի փող ստանանք: Խայտառակություն է ուղղակի. Հունիսի
24-ին նախարարների խորհուրդը վճռել է տալ այդ գումարը. իսկ մինչև այժմ
(մեկ ամիս) այդ գումարի Հեկը Հեն ուղարկել, որպեսզի այստեղի մեր միսիայի
գանձարանը փողը վճարի: Մնացել ենք, ես մանավանդ, ուղղակի, բառիս
բունն ցնանակությամբ՝ քաղցած:

Մի ճար արեք, տեսեք այդ ֆինանսների նախարարին և Հասկացրեք,
որ Հենք կարող այլևս սպասել և որ անոթի ենք: Հասկանո՞ւմ է նա
արդյոք, որ այսքան ուշացնում է մեր ստանալիք ոտճիկները:

Հետո՝ ի՞նչ եղավ ձեր այն գրքերի վաճառման արդյունքը:

Իմ դրությունը Հափազանց անտանելի է դարձել, և չգիտեմ ինչ անել:
Գրողներին Հատկացրած 100.000-ը ոչ ստացվել է մինչև այժմ և ոչ էլ երևի
պիտի ստացվի: Ահազին բաներ են ծագել այդ Հստացված գումարի
շուրջը...

Այս ամենից Հետո՝ պիտի խնդրեի, որ եպիսկոպոսի Հետ էլ տեսնվելով,
մի պաշտոն դռնեք ինձ՝ Երևան գալու: Գուցե կարելի լինի կրթական
նախարարություն մեջ դպրոցների շրջանային տեսչություն և այլ մի Հարմար
գործ...

Շատ բարեններով՝ Վ. Փափազյան

Նույն տեղում, ֆ. 105:

ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

№ 4

Սիրելի Դավիթ

“Արմ. Сборник”-ում տպագրված Ձեր հոդվածը՝ մեծ աղմուկ է հանել
վրացիների մեջ մի քանի ֆրագների առթիվ: Ֆուլթայիսում Հրապարակվող
«Միջօրեարի» թերթի 4 - 5 Համարում. Կիյա Աբաչիձեն «Իմ-ամ» կեղծա-
նունով Հայհոյում է Ձեզ: Անպայման «Մշակում» քաղվածքներ կտանք, որից
գաղափար կկազմենք...

Բարեններով՝ Ձեր Ստ. Զորյան

Թիֆլիս, 21. օգոստոսի 1916

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 4041, ց. 1, գ. 100, ք. 7:

№ 5

Սիրելի Դավիթ

«Գործի» Համար ուղարկեցի «Պապի մահը» վերնագրով գրվածք:
Հավատում եմ քո և ծովակի ճաշակին⁹: Եթե ՀՀավանեք և Հտպագրվի, հո
ուղարկեցեք ձեռագիրը...

Ձեր առաջարկը Շիրվանզադեին իր համար համարում է վիրավորական, քանի որ նրա պայմանը վերջնական էր: Նրան առանձնապես սաստիկ վիրավորեց այն, թե խմբագրությունը իրեն է վերապահում նյութերի ընտրությունը: Ինձ թվում է, որ այս որոշումը միանգամայն սխալ է Շիրվանզադեի վերաբերյալ: Եթե այդ որոշումը լինի երիտասարդ մարդկանց մասին, հասկանալի է, բայց 35 տարվա անուն ունեցող գրող, առաջնակարգ վիպասան Շիրվանզադեին վերաբերվել այնպես, ինչպես կվերաբերվեն սկսնակներին, ավելի քան վիրավորական է նրա համար... Մի՞թե Շիրվանզադեի անունը չի կարող պատասխանատու լինել իր գրվածքի համար, որ այդպիսի պայման է դրվում: Կարծում եմ, սիրելի Դավիթ, որ այս բանում դու ինձ հետ համաձայն կլինես: Ես ենթադրում եմ, որ դու դեմ ես եղել այդ որոշմանը...

Բարեններով Ձեր Ստ. Զորյան
Թիֆլիս, 7 սեպտեմբերի 1916

Նույն տեղում, ք. 9 – 10:

№ 6

Սիրելի Դավիթ

...Շնորհակալ եմ քո ընկերական խորհուրդից՝ խուսափել ֆելիետոնական թերություններից: Ես դա զգում էի և կհաղթահարեմ: Հարավային տեմպերամենտ է, ինչ արած: Թվում է, որ պետք է մի քիչ հյուսիսային սառը լրջություն ձեռք բերել և ապա այդ երկուսն իրար խառնել...

Շիրվանզադեից շնորհակալություն հայտնեցի գործադրած ջանքերի համար: Սուրխաթյանը երբ կմտնի, նրան էլ կհայտնեմ իրեն վերաբերյալ:

Հետո, մի բան ես մոռացել եմ ժամանակին գրել քեզ: Աբաշիձեի հոդվածից քաղվածքներ թարգմանվեց, բայց անկարելի եղավ տպագրել: Բանից պարզվում է, որ այն, ինչ որ կարելի է Քուլթայիսում, նույնը չի կարելի թիֆլիսում:

Ողորմելի տրամաբանություն: Իսկական смутное время:

Բարեններով քո Ստեփան
Թիֆլիս, 25 հոկտեմբերի 1916

Նույն տեղում, ք. 13:

№ 7

Սիրելի Դավիթ

Լավ է, որ պատմվածքը ձեզ և Ջիլինգարյանին դուր է եկել: Ուղարկում եմ «Սատանա» վերնագրով մի գործ: Պատմողը մի գյուղացի է, միամիտ, հասարակ ու պարզ: Լեզուն զուտ բարբառ չէ, այլ գյուղական մի լեզու է, որը, կարծում եմ, հավասարապես հասկանալի կլինի, այսինքն՝ այդ նպատակով առանձին աշխատանք է գործադրված: Թե որքան հաջողվել է ինձ, այդ բանը և պատմվածքը մասնավորապես, դա կերևա գրվածքի ընթերցումից...

Ստացել ենք «Գործի» ն. 2-ը: Սքանչելի է Վահան Տերյանի «Գաղելը»: Վ. Փափաղյանի լեզուն անտանելի է¹⁰: Բայց այս համարը ավելի հետաքրքիր է կազմված:

Մի խնդիրք ևս: Վահան Տերյանը այժմ գտնվում է Սուխումի: Բարի եղիր Հայտնել խմբագրությանը, որ «Գործի» հետագա համարները ուղարկեն հետևյալ հասցեով...

[Ստեփան]

Թիֆլիս, 21 փետրվարի 1917

Նույն տեղում, ք. 17:

№ 8

6 Հուլիսի, 1919թ. [Ղարաքիլիսա]

Սիրելի Դավիթ

Ձեռք կարող երևակայել, թե որքան վշտացած եմ, որ չկարողացա քեզ տեսնել իմ հայրենի կայարանում: Հայկի հայտնվելը և իմ կայարան վազելը մեկ եղավ, բայց քեզ այնտեղ չգտա, ձեր գնացքը արդեն մեկնել էր: Որքան ուզում էի քեզ տեսնել և ինչ հիասթափություն: Հավանորեն Հայկը ուշ, դժվարությամբ գտավ մեր տունը... Հավատա, Դավիթ ջան, ամբողջ օրը մի այնպիսի դրություն մեջ եմ, կարծես մի թանկագին բան եմ կորցրել կամ մի ծանր հանցանք եմ գործել: Որպիսի՜ լավ առիթ տեսակցության և ինչ հիմար արդյունք:

Միմոն Հախումյանը պատմեց, որ իբր Հայաստանի դիվանագիտության ներկայացուցիչ, մեկնել ես դեպի Ղարաբաղ, բայց Ադրբեջանի կառավարությունը քեզ չի ընդունել: Ցավում եմ, անհաջողության ես հանդիպել քո դիվանագիտական առաքելության հենց առաջին քայլին: Բայց մի վհատվիր:

Իմացիր. Մայիլյանները ուզում են գնել (թե արդեն գնել են) «Մշակը» Երևան փոխադրելու նպատակով: Գիտես «Մշակի» փիճակը: Լ.Քալանթարի շնորհիվ քեզ չէր հետաքրքրում, բայց հիմա պետք է հետաքրքրի: Որքան գիտեմ, Մայիլյանները լուրջ մարդիկ են և կարող են ապահովել թերթը: Ապահով եմ, որ խմբագրի պաշտոնը չես մերժի, եթե առաջարկ լինի: Այս հարցերը շոշափում եմ նրա համար, որովհետև գրական գործը քեզ (ինչպես և ինձ) հետաքրքրում է ավելի, քան որևէ ուրիշ բան...

Իսկ եթե շուտով վերադառնալու ես, կուզեի որ իջևանեիր այստեղ և մի քանի օր մնայիր մեր տանը, այս հանգիստ ամառանոցում, այս բուրմունքներով լի ժամանակաշրջանում: Թեև ընդամենը մի ամիս է՝ բաժանվել ենք իրարից, բայց, հավատա, արդեն կարոտել եմ քեզ, կարծես մի տարի է անցել...

Ողջ և զվարթ եղիր: Ողջույններով՝ քո Ստեփան

ՀՀ ԳԱԹ ԴԱ, ֆ. 35:

№ 9

Սիրելի Դավիթ

Ողջույններ Գուգարաց աշխարհից: Մի քանի օր առաջ Թիֆլիսում էի: Իմացա, որ գնում ես Զանգեզուր, իբրև պատվիրակ¹¹: Թիֆլիսի Հայ հասարակությունը, որ վերջերս զարմանալի հետաքրքրություն է ցույց տալիս դեպի Հայաստան ու Հայ ժողովուրդը, մեծ հույսեր է կապում քեզ հետ այն իմաստով, որ քո առաքելությամբ կարող ես վերացնել ժողովրդին սպառնացող աղետը: Կղերականից սկսած մինչև կոմունիստ՝ համոզված եմ, որ հանդես կբերես քաղաքական մի այնպիսի իմաստություն, որ կհաշտեցնես

անհաշտելին, և ժողովուրդը [Ջանգեզուրի] կազատվի նոր Հայաստանից: Ջգիտեմ՝ որքան կհաջողվի քո առաքելությունը, բայց մի բան կարող եմ վկայել, որ քո անունը միացնում է շատ-շատերին և հույսեր ներշնչում: Մի խոսքով՝ դու դառնում ես կամ ավելի շուտ՝ դարձել ես համազգային դեմք:

Թիֆլիսում արտաքին փոփոխություններ չկան. բոլոր խանութները բաց են, շուկան՝ լի, բայց բ-րի [բողևիկներ] գալուց հետո ամեն ինչ կրակի գին է դարձել. շատ քաղաքացիներ ապրում են տնային իրեր ծախելով: Քաղաքական իմաստով, Թիֆլիսում կատարվել է ոչ ավել, ոչ պակաս, քան «перемена декораций»: Թե ուռնները և թե հայերը Վրաստանի հեղկոմին մեղադրում են «ազգային քաղաքականության» մեջ: Եվ, իսկապես, ազգայնացումն ավելի մեծ չափով է կատարվում այժմ Վրաստանում, քան մենշևիկների օրոք: Վրաստանն ինքնորոշվում է ամենալայն մասշտաբով: Բայց, չնայած դրան, մենշևիկները և միագործ տարրերը դժգոհ են: Մի վրացու քիթ չի արնում: Կոշորի կովում մենշևիկյան բանակից ոչնչացել է 40 զինվոր: Վրաստանի հեղկոմը մեծ պատվով ու հանդեսով թաղել է դրանց Ալեքսանդրյան այգում, համարելով դրանց իր հարազատ կորուստը: Վրաստանում բռնադատվում են կատարվում: Մի ինչ-որ հիմնարկության հարկավոր էին պահարաններ, սեղաններ և աթոռներ: Հայտարարություն են տպել բոլոր թերթերում, թե ավելորդ պահարան, սեղան և աթոռ ունեցողներին առաջարկվում է տալ իրենց այդ իրերը շուկայի գներով:

Մի խոսքով՝ Վրաստանում հետաքրքրական շատ բան կա: Երեւի կտեսնվենք՝ կպատմեմ: Առայժմ չմոռանամ ասել, որ Լեոն ծանր դրություն մեջ է: «Հայոց պատմության» մնացած օրինակները առաջարկել է՝ չեն գնել: Խնդրել է օգնություն, չեն տվել: Մտադիր է այդ մասին Աշոտին նամակ գրել: Դու էլ խոսիր, որ կամ գրքերը գնեն, կամ ձեռագիրը (Պատմ.):

Տեսա Սուրխաթյանին և կնոջը: Ողջ-առողջ են: Քեզ շատ են հիշում և ինձ խնդրեցին ողջուններ մատուցանել: Սուրխաթյանը Վրաստանի հայոց «Наркомпрос»-ն է, միաժամանակ՝ գինվորական գրաքննիչ և «Կարմիր աստղի» կոլեգիայի անդամ: Պ. Զախարյանը կես առողջ է, կես հիվանդ: Ատրպետը դարձել է կոմունիստ: Նույնպես և Եր. Լալայանը:

Մայիսի 1-ին Թիֆլիսում մեծ հանդես եղավ: Ատրպետը հագել էր Բուխարայի էմիրի հագուստ, գլուխը զարդարել չալմայով և կանգնել արհեստական փղի կողքին...

Բարևներս քեզ, ընկ. Աշոտին...

Քո Ստեփան

[Ղարաքիլիսա]

ՀՀ, ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 4041, ց. 1, գ. 100, ք. 19 – 20:

№ 10

Սիրելի Դավիթ

Ժամանակին քո նամակը ստացել եմ: Մինչև հիմա պատասխան չեմ գրել, որովհետև վստահելի եկող չի եղել: Շուտով քեզ «առատ» նյութ կուղարկեմ... Լավ միտք է թերթի համար ունենալ առանձին տպարան: Դա կազատեր քեզ զգվելի կախումից և քո կոչիկները շեմքերին մաշելուց:

Ինչ վերաբերում է ինձ «հրավիրելուն», չգիտեմ, իրավ, որն է լավ, որը վատ. այստե՞ղ թե՞ այդտեղ: Երբ հիշում եմ մեր անսնունդ օրերը և ցուրտ

օթյակը այդտեղ՝ սիրտս սառչում է¹²: Մանավանդ մայրաքաղաքի փողին, մաշված մայթերը և ագռավների կոխնչը այգու գլխին: Հապա մարդիկ... Բայց այստեղ, պիտի խոստովանեմ, կյանքս անցնում է համեմատաբար հանգիստ... կարողանում եմ աշխատել: Այնուամենայնիվ, եթե թերթը ղնես հաստատուն հիմքերի վրա, և սննդի հարցը ապահով լինի այդտեղ, քիչ էլ հաճելի՝ իմ ընկերակցությունը, ես, գուցե, չհրաժարվեմ: «Գուցե» եմ ասում, որովհետև սկսել եմ մի վեպ, որը մտադիր եմ այս տարի վերջացնել: «Կարմիր հորձանք»-ը (այս վերնագիրն ունի վեպն առայժմ) բաղկացած կլինի երկու մասից: Նյութը մեր ժամանակի անցքերն են: Կան շատ զավեշտական և տխրալի երևույթներ, որոնց ականատես ենք եղել այդտեղ...

Ի միջի այլոց, ասեմ. ես մի թեթև պաշտոն ունեմ: Ղարաքիլիսայում կազմված է գրողների միություն..., որի անդամների թիվը մի քանիսն է. ես էլ, իբրև թե, քարտուղար եմ այդ միությունը: Երկար ժամանակ չէի ուղղում, շատ խնդրեցին, վերջը համաձայնվեցի: Մեր գործն այն է, որ երկու կամ երեք շաբաթը մեկ անգամ գրական երեկո ենք կազմակերպում, համարվելով խորհրդային ծառայող: Ինչ եկել եմ, երկու երեկույթ ենք կազմակերպել... Ամբողջ օրը տանն եմ ու զբաղված. դրսի կյանքի հետ շատ կապ չունեմ, հետևաբար՝ սակավ տպավորություններ, այնպես օր, շատ բան չեմ կարող հայտնել այստեղից... Ժողովուրդը նույնն է, ինչպես հազարամյակներ առաջ: Էլի գնում են ուխտ, մատաղ են մորթում անձրևի համար և մարդկանց գլխին եկած աղետներն ու մահը վերագրում են իրենց մեղքերին ու Աստծո բարկությանը:

Էլ ինչ գրեմ, սիրելիս: Ընդունիր բարևներս և ողջ եղիր: Շատ մի հուզվիր. աշխարհը և մարդիկ չարժեն քո որպիսությունը: Դեռ շատ ժամանակ է հարկավոր, որ մարդիկ դառնան մարդ:

Քո Ստեփան

17/VII, 1921թ., Մ. Ղարաքիլիսա

Նույն տեղում, ք. 18:

№ 11

Քո երկու նամակները ստացել եմ: Մեծ ուրախություն պատճառեց ինձ այն, որ տեր Հայրապետի համար պարգևատրության կոնդակ ես հանել: Բայց, ներիր ինձ, պատմվածքիս վախճանը չեմ փոխի, վասն զի այնպես, ինչպես ավարտել եմ, ավելի բնական է և գեղարվեստական, քան քո առաջարկած «կաթվածը»: Եվ, վերջապես, ես հոգնել եմ հերոսներ մեռցնելով: Թող ապրի տեր Հայրապետը: Այդպես ավելի լավ է:

Գալով քո հրավերին, պիտի խոստովանեմ, որ մեղավոր եմ քո առաջ: Քանիեւորդ անգամն է հրավիրում ես և ես խոստանում եմ գալ, բայց միշտ մի բան արգելք է լինում: Եվ այն տպավորությունը կարող է ստացվել, որ նազ եմ անում: Մինչդեռ այդպես չէ. սիրտս գալիս է, բայց ոտքերս կապված են...

Խոստանում եմ գալ մարտին... Այս անգամ որոշումս անխախտ է, մանավանդ որ ձանձրացել եմ Ղարաքիլիսայից...

Կա մի ուրիշ բան էլ, որն ինձ բերելու է դեպի Երևան: Դա իմ 2-րդ հատորի տպագրության խնդիրն է: Տիգր. Հախումյանը խնդրեց, որ պատմվածքներիս 2-րդ հատորը տամ իրեն՝ Երևան տանելու, իբրև թե Մակինցյանը տրամադիր է հրատարակել: Հախումյանն այս բանն ասավ այնպես համոզիչ

ու Հաստատ եղանակով, որ չուզեցի մերժել, թեև կասկածում եմ, որ Հագիվ թե ցանկություն լինի այժմ գեղարվեստական բան հրատարակել: Ճիշտն ասած՝ տվել եմ, բայց վախենում եմ՝ վերջր անախորժ բան դուրս գա: Ես չեմ ինդրի ոչ ոքի իմ գրածները հրատարակել, և ոչ էլ ախորժալի է ինձ բավարարվել որևէ կառավարության կողմից: Հասկանում ես՝ ինչ եմ ասում:

Հա, ջրօրհնեքից հետո եղա Թիֆլիսում: Մնացի 6 - 7 օր: Ձանձրացա, տխրեցի և ամենածանր տպավորություններով վերադարձա: Տեսա մի շարք բարեկամների՝ Պյոտր Արտեմիչին, որ արագությունը ծերանում է և դառնում է գրամոլ կամ գրամուկ. ամեն օր բուկինիստների մոտ գրքեր է քրքրում, Սուրխաթյանին, որ այս անգամ ընկճված էր: Կնոջ ասելով՝ խեղճը թոքախտ ունի... Տան մեջ կիսամուշտակ է հագնում: Տեսա Վեսպերին... Տեսա Դեմիրճյանին. թավշե [ֆլոր] գլխին: Պիեսներ է գրում տանը: Գ.Լևոնյանը քեզնից հոգված է ուզում... Հակառակ իմ ցանկության՝ չկարողացա տեսնել Լեոյին: Խեղճը ծանր հիվանդ էր, չորս-հինգ բժշկի ստորագրությամբ Հայտ էր փակցված դռան վրա, որ այցելել չի կարելի:

Այս ամենի մասին կխոսեմ, երբ կգամ: Այնքա՞ն բան ունեմ քեզ պատմելու...

Բարևներով՝ քո Ստեփան
14/II. 22թ., Ղարաքիլիսա

Նույն տեղում, ք. 40:

№ 12

Սիրելի Դավիթ

...Ոչ տուն, ոչ ընտանիք չեն լրացնում այն պակասը, որ պիտի բռներ ընկերը: Մի խոսքով կարոտել եմ քեզ, իմ ազատախոս ու Հայհոյաբան Դավիթ:

Իմ հոգում էլի աններդաշնակություն է: Քիչ է մնում ցուպը ձեռք առնեմ և դուրս գամ աշխարհե-աշխարհ շրջելու կամ քաշվեմ անտառ՝ ծառերին աղոթելու: Զբարկանաս այս հիմար մտքերիս համար, Դավիթ: Զգիտեմ ինչու՝ սիրտս տեղահան է եղել: Ձանձրույթ, ձանձրույթ...

Բացի այս բոլորը, ես մտածում եմ դառնալ մի սատիրիկ: Օ՛, լինելի մի սատիրիկ, ու լինել խոսքը ազատ: Ի՞նչ կարկուտ կլթափելի ես:

Կարծում եմ, եթե չմեռնենք ձանձրույթից, աշնանը կտեսնենք իրար: Օգոստոսից հետո ես այլևս չեմ մնա այստեղ: Հավանորեն, դու կհաջողացնես այն գործը, և կգամ քեզ մոտ: Հույս ունեմ՝ գրքիդ տպագրությունը մոտենում է վախճանին: Հայրենիք գնալիս չմոռանաս ինձ: Իջիր մեզ մոտ: Մեր տնեցիք, թեև քեզ չեն տեսել, բայց շատ հարգում են և ուրախ կլինեն քեզ տեսնել...

Քո Ստեփան
25/IV, 1922թ., Մեծ Ղարաքիլիսա

Նույն տեղում, ք. 41:

ԼԵՈՅԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

№ 13

Հարգելի բարեկամ պ. Դավիթ

Ստացա Ձեր նամակը... Չափազանց շնորհակալ եմ Ձեր բարեկամա-

կան արտահայտությունների համար: Այսօր էլ դեռ չի վերացել մղձավանջը, ու դեռ իմ վեպի գործը շուտով մի սկանդալի դուռ էլ բաց կանի դատարանում¹³: Այս դրույթյան մեջ կարող եք իմանալ՝ որքան ինձ համար քաջալերիչ պիտի լինեն իմ բարեկամների համակրանքները: «Հորիզոնի» վարմունքը դուք շատ ճիշտ եք ըմբռնել: Բացի այդ հանգամանքից, կա և այն, որ Արշակ Ղազարյանը հին հաշիվներ ունի ինձ հետ, Արասխանյանցի «Մուրճի» ժամանակից: Երևույթի հրեշավորությունն այն է, որ ես դեռ «Հորիզոնի» սեփականատերերից մեկն եմ համարվում: Երբ Համբարձում Մեխիթյանը եկավ ընկերություն հիմնելու «Հորիզոնի» համար, ես ունեի ստանալու այդ լրագրից մոտ 700 ուրբլի: Այդ գումարից ինձ տվին միայն 200 ուրբլի, զոռով գլխիս կապեցին «Հորիզոնի» ընկերության փայերից երկուսը... իսկ մնացած 300 ուրբլին դեռ այսօր էլ մնում է խմբագրության վրա: Ո՞րտեղ, ասացեք, կարելի է գտնել այսքան սև ապերախտություն, կարո՞ղ եք ցույց տալ մի ուրիշին, որ ինձ հետ զուգակից լինի մի այսպիսի բախտի մեջ: Ես դեռ մի կողմ եմ թողնում, թե տարիների ընթացքում ինչեր եմ քաշել այդ թերթը տանելու համար: Իմ բախտից մի ուրիշ օրինակ: Այստեղ աշխատակցում էի “Кавказ. Слово”-ին և ստանում էի լավ տողավարձ: Խնդրեցին հանձնարարել մի մարդու, որ կարողանար տանել հայկական բաժինը: Ես տվի փաստաբան Պոպովյանի անունը: Նա հրավիրվեց խմբագրություն, բայց հենց առաջին գործը դարձրեց ինձ թերթից փտարելը...

Ի դեպ: «Հորիզոնի» և հորիզոնականների կատաղությունն իմ դեմ հիմք ունի... Ես եմ պատճառը, որ Ղազար Տեր-Ղազարյանը տեսուչ է, Շուշում և հավաքել է իր շուրջը մեր երիտասարդության մի գունավորումը, որ հալածված էր ամեն տեղից: Բայց տեսա՞ք, Շուշում «Փայլակն» էլ իրենց աքացի տվեց...

Իմ շնորհակալություններն ու բարևները հայտնեցեք, խնդրեմ, պ. Կարա-Մուրզային¹⁴: Ես չափազանց հոգետես եմ և այդ հարցի վերաբերյալ, բայց շնորհակալ եմ այն բարություն համար, որ ցույց է տվել իմ վերաբերմամբ հարգելի պ. Կարա-Մուրզան:

Ընդունեցեք իմ սիրալիք ողջույնները: Ձեր Ա.Բաբախանյան

ՀՀ ԳԱԹ ԴԱ, ֆ. 52:

№ 14

Թիֆլիս, հուլիսի 23, 1916

Հարգելի բարեկամ պ. Դավիթ

Այստեղ գալուս օրը... ստացա Ձեր հատորը¹⁵: Պետք է գրեի շնորհակալ[կալա]նքս ոչ թե բովանդակության համար, որ վաղուց արդեն կատարել եմ, այլ այն բանի համար, որ Ձեզ հաջողվել է այս սարսափելի ժամանակներում մի այսպիսի խոշոր տպագրություն կատարել: Չպիտի հարցնեմ Ձեզ, թե ինչպես եք գլուխ բերել այդ հրաշքը, որովհետև ես էլ իմ «Հայոց պատմության» համար ստացել եմ 7000 ուրբլի, բայց չեմ կարողանում մոտենալ անգամ տպարանին... Չպիտի մի շարք այսպիսի բաներ գրեի: Բայց գիտեք, երեկ, թե ինչ վայնասուն են բարձրացրել ազգային տիրացուները իմ դեմ մի երկու թղթի պատճառով, որոնք Երևանի դպրոցին են պատկանում...¹⁶:

Այժմ եմ ժամանակ գտնում շնորհակալություն հայտնելու Ձեզ, որ հիշել եք ինձ: Շատ ափսոս, որ գիրքը հետո չբերի, որ կարդամ: Հուլյս ունեմ աշնանը հիմնավորապես ծանոթանալու Ձեր գրքի հետ և իմ տպավորությունները կգրեմ, իհարկե, եթե տպող լինի: Կարծեմ, «Արևը» չի մերժի:

Գրադարանիս լավագույն մասը ծախեցի 1000 ռուբլով, համարյա արտասուքով բաժանվեցի իմ սիրասուն գրքերից, որպեսզի կատարեմ խղճիս պահանջը, և եկա այստեղ...

Սիրալիր բարևներս: Ձեր՝ (ստորագրություն)
(Սորնոչ, Դեորգիևսկի)

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 4041, ց. 1, գ. 100, ք. 43 – 44:

№ 15

Թիֆլիս, հուլիսի 30, 1920

Սիրելի Դավիթ

Ծախելով ինչ-որ կարելի էր ծախել... եկա – հասա մի «հոգեպահուստի», որի մասին երկար ու բարակ խոսել չեմ ուզում: Ահա ուղարկում եմ քեզ, որ տեսնես և եթե, իհարկե, կարողանաս գնել քո «Կոոպերացիայի» համար: Ձգարմանս, որ «Հայրենի հիշատակները» «Կոոպերացիային» եմ ուղարկում, որովհետև եթե «Կոոպերացիան» էլ չլիներ, պիտի տանեի նպարավաճառի մոտ, որին, կարծեմ, հարկավոր էլ չէր գա թղթի բարակության պատճառով:

Ախպեր ջան, մեր սոցիալիստական դարում մենք հասանք այն օրին, որ հայերեն գիրք ոչ ոք չի հարցնում: Ձեն կարգում, չէ: Մեռավ մեր գրականությունը, մեռնում ենք և մենք՝ գրողներս: Դու ես միայն, չէ՞, որ այս խենթ ու խելառ ժամանակ դեռ [խնդրություն] ունես «Կոոպերացիայի» մի փոքրիկ տեղում. ապաստան տալ հայոց անբախտ գեղարվեստական գրականության: Դե, որ այդպես է, համեցեք, ահա մենք էլ կգանք քո դուռը կոտրելու և մեր ձեռագրերը առաջարկելով, հաց խնդրելու:

Ես վճռել էի չտպագրել այս աշխատությունս, քանի կենդանի եմ, ուզում էի թողնել ժառանգներիս իբրև ընտանեկան սրբություն, որ մահիցս հետո տպեն: Բայց հիմա ի՞նչ ժամանակներ են այդպիսի քմահաճություններ ունենալու: Քաղցած ենք և մերկ ենք բառիս բուն նշանակությամբ...

Ինչևիցե: Խնդիրքս է, կարդա, եթե հարմար կդատես «Կոոպերացիայի» համար ամբողջը վերցրու և մաս-մաս տպագրիր: Եթե ամբողջը չկարողանաս, անճար ենք, վաճառում ենք և մաս-մաս, ընտրություն արա և գոնե մի քանիսը տպագրիր և տուր ինձ հոնորար, որ ապրեմ: Այս բոլոր պատվերներից, ինչպես գիտես, «Գանձասարն» է միայն, որ տպված է, մնացածները միանգամայն կույս են...

Ասած է՝ «Ոչ միայն հացիվ կեցցե մարդն»: Թեև այժմ այս բանը սարսափելի կերպով ծաղրվում է, բայց ես էլի ուզում եմ հին մարդ մնալ և հարցնում եմ քեզ. ո՞նց է իմ գեղարվեստը: Ո՞նց եմ իմ վերջալույսին: Եթե հավանես, մի շարք պատկերներ էլ ունեմ մտքիս մեջ, կգրեմ: Եթե չէ, կթողնեմ իմ գրականության այս սեռը:

Սեղմում եմ ձեռքդ: Քո Լեո

ՀՀ ԳԱԹ ԴԱ, ֆ. 56:

ԱՐԱՄԱՅԻՄԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

№ 16

Սիրելի Դավիթ

...Հեռախոս չունես, քաղաք չեմ գալիս, դիմում եմ թղթին: Ես ծայրահեղ հետքերը թյամբ եմ կարդում քո «Ռուսահայերի Հասարակական դարգացումը 19-րդ դարում» գիրքը: Իսկի գիտե՞ս ինչ գործ ես տվել: Դեռ չեմ վերջացրել, որովհետև դու միայն հետաքրքիր, պատմական տեղեկություններ չես տվել, այլև՝ մտածելու նյութ, ուստի շուտ կարդալ, անցնել չի լինում: Ափսոս, սակայն, որ կարդալ-վերջացնելուց հետո էլ քո աշխատության մասին ոչինչ ասել չպիտի կարողանամ, որովհետև քո գրքի մասին խոսելու համար հարկավոր է լայն ծանոթություն այդ շրջանի, որ դու ես վերցրել, ես այդ չունեմ: Իսկ մակերեսորեն անցնել վրայից, տպավորություններ տալ, ես չեմ ցանկանա, մեղք է գիրքը: Բայց, ով գիտի, գուցե վերջացնելուց հետո... Սրբոց զորություն իջնի ինձ վրա, և ես ուժ դգամ խոսելու...

Բարևներով [ստորագրություն]
26/VI [1916, Բալխանի]

Նույն տեղում, ֆ. 101:

№ 17

Սիրելի Դավիթ

...Ես այժմ գտնվում եմ Շուշի: Եկել եմ ապրիլի 25-ին: Ինչ որ պետք է գրեի, ամփոփված է Ղարաբաղի 5-րդ համագումարի պատասխանի մեջ՝ ուղղված անգլիական հրամանատարության ներկայացուցիչ Շատելվորտին:

Անգլիական միսիան այստեղ պնդում է, որ Հայաստանի կառավարությունը ընդունել է Հայկական Ղարաբաղի ժամանակավոր կերպով Ադրբեջանին հանձնելը: Սա ոգի է տալիս և ստիպում անպայման ենթարկվել նրան: Ժողովուրդը միաձայն մերժել ու մերժում է: Իսկ Զանգեզուրը քոչն անգամ բաց թողնել չի ուզում: Սա հայտնել է, որ պետք է կոպի բոլոր ոտնձգությունների դեմ, ում կողմից էլ որ լինի: Ամեն ջանք գործադրում է, որ Ղարաբաղը նոր արյունահեղության ասպարեզ չդառնա: Բայց ՀՀԱՎատացողները կամ, ավելի շուտ՝ մեր իրավունքները հաշվի չառնողները կարծես գործը համառորեն մղում են դեպի այն պատուհասները, որոնցից ամեն կերպ խուսափում է Ղարաբաղի հայությունը:

Հիմա, սիրելի Դավիթ, մանրամասնությունները թողնելով գրաբերիս, գրում եմ, որ այստեղի ուսուցչությունը սոված դրություն մեջ է գտնվում, ПОДПОЛЪЕ մտած Ազգ. խորհուրդը նրանց օգնելու հնարավորություն չունի, և ահա առաջարկում են իրենցից վերջին օգնությունը մուրալ: Կարծում եմ, որ նրանց դրությունը քեզ ևս պետք է հետաքրքրի և դու կաշխատես որևէ միջոցով օգնել Վահանի¹⁸ հետ՝ ճանապարհը գտնելու, որին նույնպես գրում եմ այդ մասին...

Իսկ առայժմ՝ ողջ եղիր: Զերմ-Ջերմ բարևներով [ստորագրություն]
1919, 6 մայիսի, Շուշի

ՀՀ ՀՔԿԲ ԿՊԱ, ֆ. 4041, ց. 1, գ. 102, ք. 61 – 62:

Սիրելի Դավիթ

Նամակս գրում եմ չափազանց հոգնած տրամադրությամբ տակ: Այսօր Ադրբեջանը տոնում է իր զորքերի՝ Բաքու մտնելու օրը¹⁹. փողոցները, խանութները զարդարված են դրոշակներով, պարադ պետք է լինի «Площадь свободы» հրապարակում... Այսօր Բաքվի փողոցներում փռված էին երկու Հայ երեխաների, Հայ կանանց ու տղամարդկանց դիակներ: Այսօրվա Ադրբեջանի ուրախության աղաղակը՝ Հայ երեխաների, մորթվող երեխաների [լուսալիսն] է: Եվ այսօր Բաքվի Հայությունը, փոխանակ Հսկայական սգահանդես կատարելու, ստիպված է իր խանութներն ու տները դրոշակներով զարդարել...

Ադրբեջանը իր ինքնորոշման, ազատության տոնը նույնպես տոնելու է մայիսի 28-ին: Իսկ այս տոնը կարծես ոմանց ցույց տալու համար է, թե ձեր հերն անիծած, ահա համ կոտորեցինք, համ տոնում ենք, և դուք էլ պետք է տոնեք ձեր կոտորվելու օրը՝ մեզ հետ միասին:

Այստեղ, մակերեսորեն վերցրած, ընդհանրապես, կարող է և, եթե դրամ լինի, առատություն է, կարելի է ապրել, էն էլ լավ ապրել: Եվ լավ ապրողներ շատ-շատ կան, մանավանդ թուրքերից: Նրանք չափազանց հարուստ են, ամբողջ առևտուրը իրենց ձեռքն են առել, իսկ Հայերին մնացել է միայն չարչիություն բաժինը:

Ինչ որ է: Այսօր «Աշխատավորում» կարդացի «Աշխատանք» լրագրից արտատպած մի հոդված՝ Դարաբաղի մասին: Դա քիչ է, հոգվածներով բան դուրս չի գա: Ռուբենի հետ այդ խնդրի մասին բավականին խոսել եմ: Նա, իրոք, ձեզ կծանոթացնի եղած-չեղածի մասին: Դու էլ աշխատիր, միակ ճանապարհն է:

Ռուբենը, առհասարակ, հարուստ տեղեկություններ կբերի ու հետաքրքիր: Նրանից կծանոթանաս քեզ հետաքրքրող շատ խնդիրների հետ:

Ես միառժամանակ պարապ մնալուց հետո մտա մի պաշտոնի: «Ներգաղթի գլխավոր խորհուրդ» է կազմվել՝ Նուխու Հայ գավառներից Հայության մնացորդները տեղափոխելու Հայաստան²⁰: Այդ գործում է, որ պաշտոնավարում եմ, ամսական 2500 ռուբլի ուժեղով... Ե՛հ, ջհաննամը, մի կերպ յուր կգնամ, մինչև տեսնեմ գլուխս ինչ է գալիս:

Ասում են, որ Հայ գրողներին կառավարությունը դրամ է բաց թողել... Եթե այդտեղ պետք է կատարվի դա, չմոռանաս քո աղոթքների մեջ հանցավորիս ևս հիշելու:

Այստեղ ես ինձ միայնակ եմ զգում. մտերիմ ընկերոջ պակասություն զգացվում է մեծապես: Գործս վերջացնում եմ, գլուխս կախ գցած վերադառնում տուն ու օրերս կարճում մի կերպ: Մի տարի եթե կարողացա այս տեղը պահել, եկող տարի երևի կտեղափոխվեմ այդտեղ, եթե խոշոր քաղաքական փոփոխություններ չկատարվեն, իհարկե:

1919, 15/IX, Բաքու

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 4041, ց. 1, գ. 102, ք. 63 – 64:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԻՍԱԹՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

№ 19

Այսօր միայն ստացա նամակդ ձեռագրի մասին և անմիջապես գնացի Ղազարյանի մոտ: Շատ եռանդուն պահանջեցի, բայց տիկին Ղազարյանը²¹ պատասխանեց, որ առանց Արշակի չի կարող հանձնել: Նիկ.Աղբալյանը այստեղ չէ: Տիկնոջը ասացի, որ իսկույն նամակ գրի Մոսկվա և Հարցնի Արշակից: Ես կարծում եմ, որ ամենակարճ ճանապարհը սա կլինի. նամակս ստանալուն պես անմիջապես հեռագրիր Արշակին, որ նա կնոջը հեռագրով պատվիրի տալ ձեռագիրը: Նրա հասցեն է... Հեռագիրը ես էլ կարող էի տալ, բայց կնոջ խոսքից հասկացա, որ ավելի լավ է ամուր հիմքերի վրա դրվի գործը՝ չդանդաղելու համար: Թող Արշակը հեռագրի մեջ հիշի, որ ձեռագրի մնացած մասը ինձ հանձնի նաև Նիկ.Աղբալյանի կիներ: Այն ժամանակ, թվում է, առանց հապաղման կստանանք: Դեհ, շտապիր, որ շուտով էլ տպես...

Քո Հարույթյուն
25 /1, 16 [Թիֆլիս]

ՀՀ ԳԱԹ ԴԱ, ֆ. 93, ք. 1:

№ 20

Սիրելի Դավիթ

Նամակս իսկապես պիտի լիներ Բախշուն²² պատասխան, բայց ամսի 12-ից հետո նա գնալու էր ուրիշ տեղ, ուստի ուղարկում եմ քեզ: Ժողովածուի երկու թեմաների մասին Հայտնեցի Ազատյանին և Արամայիսին: Առաջինը գրելու է «Պատերազմի ազդեցությունը ժողովրդի տնտեսական դրության վրա», իսկ Արամայիսը գրելու է ազգային հարաբերությունների մասին՝ կամ առաջարկվածներից մեկը: Վերջին թեմայով գուցե այստեղ էլ գրող լինի, բայց Ար[ամայ]ի ասելով՝ նա նոր ասելիքներ ունի, ուստի լավ կլինի, եթե երկու հոգիված լինի այդ հարցի շուրջը: Բախշուն Հայտնել էի, որ եթե շուտ կարգավորվելու չեն ընդունվածները, ինձ հանձնարարված թեմաները կպատրաստեմ ամառվա ընթացքում: Նույնը ասացին նաև մյուսները: Բախշին ինձ չէր գրել, թե ինչ ծավալ պիտի ունենա Հոդվածը և ինչ միջոցներով է լույս ընծայվելու: Պայթելու է միանգամից մեր ազգայինների գլխին: Թվում է ինձ, որ խոշոր քննարկման առիթ կտա այդ ժողովածուն: Ես կառաջարկեի, ի միջի այլոց, լավ, մաքուր և պարզ լեզվով գրել հոդվածները: Մեր մարդիկ իրենց աղավաղված լեզվով են գրում: Ի՞նչ եղավ գիրքը:

Բարևներով՝ քո Հարույթյուն

Նույն տեղում, ք. 6:

№ 21

Սիրելի Դավիթ

Շնորհակալություն, ստացա գիրքը և մի շնչով կարդացի: Աշխատությունը ինձ հիացրեց: Իբրև գործ, ուսումնասիրություն, իր տեսակի մեջ առաջինն է մեր գրականության մեջ և եզակի: Քո գրքի շնորհիվ ինձ համար շատ բան պարզվեց: Մտքի պարզությունը և տրամաբանական հետևո-

դականությունը գրվածքում զարմանալի չափի են հասել. ոչ մի ավելորդ բառ, ոչ մի ավելորդ միտք չկա ահագին հատորյակի մեջ: Գիրքը հնարավորություն է տալիս պարզորեն ըմբռնելու այն միջավայրի բնույթը, որի մեջ ապրել է կովկասահայությունը վերջին մի քանի դարերում: Ես կարող եմ միայն անկեղծ սրտից շնորհավորել քեզ և փափագ ունենալ կարդալու թե հաջորդ հատորները և թե հին ու միջին դարերին նվիրված մասը: Ես խորհուրդ կտայի երրորդ հատորից հետո ձեռնարկել հնի և միջինի ուսումնասիրությունը: Դու պատվով դուրս կգաս, ես համոզված եմ...

Տպագրությունն էլ մաքուր է, թուղթը լավ. ներկայիս համար անսպասելի էր այդպիսի հրատարակումը:

Քո Հարույթուն
9/VII, 16 [Թիֆլիս]

Նույն տեղում, ք. 7:

№ 22

7. IX. [Թիֆլիս, 1916]

Սիրելի Դավիթ

...Գրում ես, թե իմ գրախոսականը գրքիդ մասին²⁰ ոմանց ներբող է թվացել, որ ես պետք է ավելի զգաստ լեզու բանեցնեի: Ես անկեղծորեն ասել եմ այն, ինչ-որ անհրաժեշտ եմ համարել: Ես կշռել եմ այն, ինչ ասել եմ: Ճիշտ է, ոգևորվել եմ աշխատությունովդ, բայց դա բխել է նրա արժեքից: Ով չի նախանձում քեզ... Գրածս ներբող չէ: Հիշաչար մարդիկ շատերն են ընդունում գրածիս ճշմարտությունը, ըստ որում և գրաքննական շատերին շրջել է հետաքրքրվել աշխատասիրությամբդ: Դու մի լսի այդ «Համեստության սիրահարներին»: Ես նրանց չեմ հավատում: Ոգևորվիր աշխատանքովդ, գոտեպնդվիր, պատրաստիր նրա շարունակությունը, ապա և միջնադարի ու հնի ուսումնասիրությանը դիմիր: Աշխատությունդ շատ կարևոր է և ոչ միայն մինչև այսօր: Թվում է, թե ուսումնասիրությունդ կարող էր տարիների ընթացքում միայն տարածվել, մինչդեռ հավանական է, որ նա սպառվի համեմատաբար կարճ ժամանակում: Ինչ որ է...

Ողջուն իմ և կնոջս կողմից: Քո Հարույթուն

ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 4041, ց. 1, գ. 102, ք. 23 – 24:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Դավիթ Անանունին ուղղված կամ նրա գրած նամակների հրապարակման առաջին փորձը կատարել է վաղամեծիկ գրականագետ Գոհար Ազնավուրյանը (Պատմա-բանասիրական հանդես, 1984, № 1):

2. Բաքու, 1917:

3. Երևան, 1919 – 1920:

4. Հայաստանի կոոպերացիա, 1919, № 14, էջ 417:

5. Նույն տեղում, 1920, № 1, էջ 25, 27:

6. Զալալ Տեր-Աստվածատրյանը Դավիթ Անանունի համադյուլացին էր, նրա մտերիմ ընկերը (Մշակ, 1919, № 39): Զալալը այդ ժամանակ սովորում էր Թիֆլիսի ռազմական դասընթացներում և թոքերի հիվանդություն ուներ:

Անանունը Շիրվանզադեին խնդրել էր միջամտել՝ ավարտելուց հետո Զալալին ծառայության թողնելու թիկունքում:

7. 1919թ. ՀՀ լուսավորության նախարարությունը, որը գլխավորում էր Նիկ.Աղբալյանը, որոշել էր կարիքի մեջ գտնվող հայ գրողներին օգնելու համար հատկացնել 100 հազար ռուբլի: Խոսքն այդ մասին է:

8. Խոսքը վերաբերում է 1916թ. Ս.Պետերբուրգում Մ.Գորկու խմբագրությանը լույս տեսած «Сборник армянского литературного фонда» ժողովածուում տեղ գտած Դավիթ Անանունի «Հայերը Ռուսաստանում» հոդվածին:

9. Ի նկատի ունի գրաքննադատ և հրապարակախոս Յուլի Խանդադյանին:

10. Ստ.Զորյանը ակնարկում է «Գործի» երկրորդ համարում տպագրված Վրթ.Փափազյանի «Իմաստուն Բիզիրփայի արկածները» պատմվածքը:

11. Հայաստանի Հեղափոխական կոմիտեի որոշմամբ, 1921թ. մայիսի 1-ին Երևանից Զանգեզուր է մեկնել մի պատգամավորություն՝ հետևյալ կազմով՝ Արտաշես Կարինյան (պատվիրակության ղեկավար), Վասիլի Մելնիկով (Կարմիր բանակի ներկայացուցիչ), Երևանի քաղաքացիների կողմից՝ Դավիթ Անանունը, Ա.Դոն (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) և Հ.Մելիքյանը: Այդ պատվիրակության խնդիրն էր բանակցություններ վարել Լեռնային Հայաստանի և Հայրենիքի փրկության կոմիտեի կառավարությունների և հրամանատարության հետ՝ ռազմական գործողությունները դադարեցնելու համար: Ստ.Զորյանը ի նկատի ունի այդ պատվիրակությունը:

12. Ստ.Զորյանի ակնարկի իմաստը հետևյալն է. 1920 – 1921 թվականներին, մոտ մեկ տարի, ինքը և Դ.Անանունը Երևանում՝ ապրել են այն ժամանակ Լուսավորության ժողկոմ Աշոտ Հովհաննիսյանի բնակարանում:

13. Լեռնի ակնարկի էությունը հետևյալն է. 1915թ. մարտին հյուրախաղերով Թիֆլիս է գնում Բաքվի հայ դերասանական ընկերությունը: Խաղացանկի մեջ էր մտցված նաև Լեռնի «Մելիքի աղջիկը» վեպի հիման վրա օրիորդ Ս.Եղոյանի գրած համառուն դրաման: Լեռն դժգոհ էր դրամայից և պահանջում է դադարեցնել բեմադրությունը: Այդ առթիվ մեծ աղմուկ է բարձրանում: Հայ դերասանական ընկերության տնօրեն Ա.Արմենյանը, հանդես գալով «Հորիզոնում» (№ 67, 29 մարտի, 1915), մեղադրում է Լեռնին: Գործին խառնվում է նաև Հայ գրողների կովկասյան ընկերության վարչությունը: Լեռն իր պատասխանում («Հորիզոն», № 69, 1 ապրիլի, 1915) բացատրում է իր վրդովվելու պատճառը և կտրուկ պահանջում դադարեցնել բեմադրությունը:

14. Պողոս Կարա-Մուրզան Բաքվում տպագրվող «Нефтяное дело» թերթի խմբագիրն էր, որը մտերիմ էր Անանունին: Կարա-Մուրզան իր թերթում պաշտպանել էր Լեռնի հեղինակային իրավունքը վերոհիշյալ հարցի վերաբերյալ:

15. Խոսքը վերաբերում է Դ.Անանունի «Ռուսահայերի հասարակական զարգացումը» եռահատոր գրքի առաջին մասին, որը լույս է տեսել 1916թ., Բաքվում: Հետագայում այդ գրքի երկրորդ մասը տպագրվել է 1922 թ., Էջմիածնում, իսկ երրորդ մասը՝ 1926թ.՝ Վենետիկում:

16. Երբ Լեռն գրում էր Երևանի թեմական դպրոցի պատմությունը, այնտեղից ստացված նյութերից մի քանի փաստաթղթեր անհետացել էին, որը և առաջ էր բերել աղմուկ: Հեղինակը ի նկատի ունի այդ տհաճ դեպքը:

17. Բաքվի Հայոց ազգային խորհրդի հանձնարարությամբ, Արամայիսը 1919թ. ապրիլին մեկնել է Ղարաբաղ՝ օգնելու տեղի Ազգային խորհրդին՝ իր ինքնորոշման դատը պաշտպանելու համար: Նա Շուշի է հասնում ապրիլի 25-ին: Այդ օրերին Շուշիում տեղի էր ունենում Ղարաբաղի հայության V համագումարը,

որը Բաքվում գտնվող անգլիական զորքերի հրամանատար, գնդապետ Շատելվորտի և Ղարաբաղի ժամանակավոր նահանգապետ Սուլթանովի մասնակցությամբ քննարկում էր Ղարաբաղի Ադրբեջանին ենթարկելու մուսավաթական Ադրբեջանի պահանջը: Իր ելույթում, Շատելվորտը լիտիաբար հայտարարել էր, թե իբր Հայաստանի կառավարությունը համաձայն է Ղարաբաղը թողնել Ադրբեջանի կազմում: Համագումարը կտրուկ մերժում է անգլո-մուսավաթական այդ պահանջը: Արամայիսը ի նկատի ունի այդ իրադարձությունը (Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 38, թ. 27):

18. Ըստ երևույթին, նկատի ունի Վահան Տերյանին:

19. 1919թ. սեպտեմբերի 15-ին թուրքական բանակը Նուրի փաշայի գլխավորությամբ ներխուժել է Բաքու և երեք օր շարունակ ջարդել հայերին ու մյուս քրիստոնյա ժողովուրդներին: Այդ օրերին Բաքվում սրի է մատնվել ավելի քան 30 հազար հայ:

20. 1918 – 1919թթ. թուրք-մուսավաթական դահիճները կոտորել են ինչ-մազի, Լենքորանի, Ղուբայի, Շամախու, Գյոքչայի, Արեշի, Նուխու հայ բնակչությունը, ավերել ավելի քան 50 հայկական բնակավայրեր և սրի մատնել շուրջ 30 հազար մարդու: Արամայիսի նշած խորհուրդը զբաղվում էր այդ տարածքներում մնացած հայերին Հայաստան տեղափոխելու հարցով:

21. Դ. Անանունի «Ռուսահայերի հասարակական զարգացումը» գրքի խմբագիրը Արշակ Ղազարյանի կինն է:

22. Նկատի ունի Հայտնի վիճակագիր Բախչի Իշխանյանին:

23. Հարույթյուն Սուրխաթյանի՝ Դ. Անանունի գրքի մասին գրախոսականը տպագրվել է «Մշակի» 1916թ. 169 – 171 համարներում: